

1040

ԱՍՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃ. ԴՊ. ԳՐԱԴԱՐԱՆ

ԴԱՐԵՐ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ԵՄ

1

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՈԿԻ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԻՑ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՊՐԱԿ Ա.

Փոխագրություն ռուսերենից ՅԵ. ԼՈՒՅ.ՑՈ.ԴԻ

Բ. Վերափոխված հրատարակություն

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1927

29 JUL 2010

30 MAY 2011

9(1)
9-88

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃ. ԴՊ. ԳՐԱԴԱՐԱՆ
№ 1 ԴԱՐԵՐ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ՖԵՐՆԱՇԵՎՈՎԻ

ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ՖԵՐՆԱՇԵՎՈՎԻ

Ա. Ֆ.


ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ
ԿՅԱՆՔԻՑ ՊԱՏԿԵՐՆԵՐ

13346

ՊՐԱԿ Ա.

Փոխադրություն ուսուերենից Յ. Յ. Լ. Ա. Զ. Ա. Ն. Ի

Բ. ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



Պետական հրատարակչություն
ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. Ֆ. Ա. Հ. Ա. Զ. Ա. Ն. Ի

ՅԵՎ Ա. Ֆ. Ա. Հ. Ա. Զ. Ա. Ն. Ի

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԻՑ ՊԱՏԿԵՐՆԵՐ

1. ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ.

Վաղ առավոտ եւ Քաղաքում, շուկայի հրապարակի վրա շատ մարդիկ են խոնվել: Ամեն կողմից դեպի հրապարակն են շտապում տանտիկինները: Ամեն մինը ձեռին մի փոքրիկ զամբյուղ ունի գնումների համար, իսկ գնել շուկայում կարելի յէ՝ ինչ-վոր հարկավոր եւ Բանջարեղենի, նպարեղենի և մսի միքանի խանութներ լի յեն գանազան բարիքներով:

Շրջակայքի գյուղացիները 10-20 վերստ հեռավորությունից բերել են քաղաքի շուկան գետնախնձոր, կաղամբ, մորթած թուչուններ, մսի բդի և բար, Խանութպաններն ու գյուղացիներն իրար գլուխ պատռելով իրենց մոտ են կանչում գնորդներին: Հրապարակում իրարանցում և աղմուկ ե տիրում: Տեղ-տեղ լսվում են հայույանք և սուր խոսակցություն: Խանութներում և սայւերի մոտ տաք առևտուր ե տեղի ունենում:

Ամեն մի տանտիկին գնում ե այնքան, վոր-

քան հարկավոր ե այդ որվա ճաշի համար: Մի-
այն շատ ըչերն են գնում յերկու-յերեք որվա
համար: Մեծ պատրաստություն տեսնելու կա-
րիք չկա. չե վոր խանութներն ամեն որ բաց
են: Մեկ ել՝ շաբաթը յերկու-յերեք անգամ գլու-
ղացիները շուկա յեն բերում պարտիզի բանջարե-
ղեններ և թռչուններ: Ուրեմն, միշտ ել կարելի
յե գնել՝ ինչ-վոր հարկավոր ե, միայն թե փող
լինի:

Այսպես չեն ապրում գյուղում: Այստեղ չկան
ամենորյա շուկաներ, ուր կարելի լիներ միս և
բանջարեղեն գնել: Մեկ ել՝ գյուղացին այդպի-
սի գնումների համար միշտ փող չի ունենում:
Բայց սրա փոխարեն ամեն մի գյուղացի գոնե-
մի փոքրիկ պարտեզ և վարելահող ունի: Նա
մշակում ե վարելահողը և աշնանը զանազան
տեսակ պաշարեղեն հավաքում:

Շատ չեն այս պաշարեղենները, սակայն ապ-
րեցնում են գերդաստանին մինչև նոր հունձը:


Այժմ այսպես են ապրում քաղաքացիներն ու
գյուղացիները: Բայց յեղել ե մի ժամանակ. շատ
հազարավոր տարիներ առաջ, յերբ բոլորովին չեն
յեղել քաղաքներ՝ շուկաներով և խանութներով,
չեն յեղել նաև գյուղեր՝ պարտեզներով և արտե-
րով: Բայց այսպես մարդիկ այդ ժամանակն ել
են ապրել, իրենք կերակրվել և կերակրել իրենց

յերեխաներին: Նրանք չեն իմացել հողը մշակել,
կերակուր պատրաստել, հագուստ կարել: Նրանք
վոչ մի գործիք չեն ունեցել: Վերև հիշածներից
վոչինչ չեն իմացել և չեն ել արել, բայց և այն-
պես ապրել են: Սակայն, ինչպես են սրանք, այս
նախնական վայրենի մարդիկ, իրենց համար կե-
րակուր ճարել:

2. ԽՈՐ ԱՆՑՅԱԼՈՒՄ.

Պայծառ արել ջերմությամբ և լուսով վողո-
ղում ե անտառը, վորի մոտով հոսում ե փոքրիկ,
արագընթաց գետակը: Անտառը տեղ-տեղ հաս-
նում ե մինչև գետափը, տեղ-տեղ հեռանում
նրանից. և ահա այդպիսի տեղերում բացվում
են զվարթ, կանաչ մարգագետիններ, թռչունները
թռչկոտում են ձյուղից ձյուղ և ողը խլացնում
բազմազան ճռվոյլունով: Վոչ մի տեղ բնակու-
թյան հետքեր չեն յերեսում: Հանկարծ մի մար-
գագետնի ծայրում թռչունները հուզված ճիչով
վերև թռան: Սրանց յետեից անտառից դուրս
յեկան մի տեսակ ոտարոտի ելակներ. թե մարդ
ասես, մարդ չեն, թե գաղան ասես, գաղան չեն:
Ահա նրանք տեղափորվեցին մարգագետնում: Այժմ կարելի յե նրանց լավ տեսնել և հասկա-
նալ, վոր մարդիկ են և վոչ գաղաններ: Առա-
ջից գնում եր յերկար մազերով մի ամրակազմ

տղամարդ, ճյուղապատ մահակը ձեռին. Տղամարդու լեռներից քաշ եր գալիս մի կին, փոքրիկ լե-



Նկար 1. Լաբինտին մարդիկ

բեխան զրկում: Սրանք նախնական մարդիկ ելին: Սրդեն միքանի ժամ ե, ինչ նրանք թափա-

ռում ելին անտառում, ուտեստ վորոնելով: Որն անհաջող եր յեղել, և ուտելու շատ քիչ բան եր պատահել: Սրանք մոտեցան գետակին. տղամարդն սկսեց մահակով և ձեռքով քչփորել թփերի և խոտերի մեջ. կինը մերկ յերեխային դրել եր գետնին և ոգնում եր տղամարդուն՝ վորոնումներ անելու: Յերեխան սաստիկ լաց եր լինում՝ անուժ թպրտալով խոտերի մեջ: Բայց ծնողներն ուշադրություն չելին դարձնում նրա աղաղակին: Նրանք փորփրում եյին գետինը, արմատներ եյին հանում և միջատների թրթուրներ ժողովում: Արմատներից միքանիսի համը տեսնելուց հետո դեն ելին շպրտում, իսկ մնացածն ազահությամբ ուտում եյին: Բայց ահա տղամարդը հանկարծ ուղղվեց, սաստիկ բղավեց և սկսեց մահակով խփել խոտերին: Հետո կոացավ և ձեռով բարձրացրեց մի մեծ ոձ: Նա ատամներով և ձեռքերով նրան յերկու կտոր արավ: Մի կտորը պահեց իրեն, մյուսը տվեց կնոջը: Մի ըռպեյում մարդ ու կին կերան, մաքրազարդեցին ամբողջ ոձը:

Հետագա վորոնումները նույնպես հաջող անցան: Կինը միքանի մողես բռնեց. մացառուտում գտնվեցին ճաշակելի բավականաշափ պտուղներ: Այսպես՝ այս ընտանիքը կուշտ կերավ, կշտացավ և հենց այդտեղել, մարդագագետնի վրա, պառկեց

հանգստանալու, կինն սկսեց յերեխային ծիծ
տալ: Նրա կողքին մեջը վրա պառկեց տղա-
մարդը՝ մահակն իր կողքին դնելով: Տաք եր,
բայց վոչ շոգ. շուտով այդ գոհ և կուշտ վայրե-
նիսերը խոր քնի մեջ ընկդմվեցին:

Անցել եր մի յերկու ժամ: Մարդիկ խաղաղ
հանգստանում եյին, չսպասելով վոչ միդժբախ-
տության, սակայն դժբախտությունը մոտ եր:
Անտառի թափուտից կամացուկ դուրս լեկավ մի
ահագին գաղան, վոր տեսքով վագրի յեր նման:
Նա քթով ոդը հոտոտեց և նբա աչքերը փայլա-
տակեցին. գաղանն զգաց, վոր վորս կա: Նա ըն-
կավ փորի վրա և զգուշությամբ սողաց դեպի
քնած մարդիկ: Սրանցից միքանի քալլ հեռու
նա կանգ առավ: Նրա վառ աչքերը հառած նա-
յում եյին առաջ: Այդ ըոպեյին կարծես թե մինը
հրեց ընած մարդուն: Նա արագությամբ տեղից
բարձրացավ, իսկույն նկատեց թշնամուն, խլեց
մահակը և սուր ճիշով վոտի կանգնեց: Գաղանը
վրա թռավ, մարդը խույս տվեց և մահակով
հարվածեց նրա գլխին: Գաղանը ցավից մռնչաց
և նորից հարձակվեց վորսի վրա: Այս անգամ
հարձակումը հաջող եր. թշնամիներն ընկան գե-
տին: Մարդու խոպոտ աղաղակը միախառնվում
եր գաղանի մռնչունին: Մարդն արիաբար պաշտ-
պանվում եր: Նա պատառոտում եր գաղանին

եր ուժեղ ձեռքերով, կոծում եր ատամներով:
Սակայն՝ ուժերը չափազանց անհավասար եյին:
Գաղանը հաղթեց և սկսեց պատառ-պատառ անել
եր վորսին: Իսկ այդ միջոցին կինն արդեն շատ
հեռու յեր գտնվում: Աղմուկի հենց սկզբին նա
զրկեց յերեխային և փախավ անտառի խորքը:
Այսուեղ նա զիտեր մի ապահով տեղ—մի մեծ
ծառի խոռոչ: Այս խոռոչը ծառայում եր մարդ-
կանց վորպես բնակարան: Այդտեղ ել նա պահ-
վեց իր յերեխայի հետ: Այսպես եր նախնական
մարդկանց կլանքը, լերը դեռևս կրակ անել չգի-
տելին և, բացի մահակից, ուրիշ զենք չունեյին:

Յ. ԿՐԱԿԻՆ ՏԻՐԵԼԸ.

«Այս պատահել ե շատ հին ժամանակ,—սկսեց
իր պատմությունը ծեր ալեռուտը*, վոր անցել
եր Ամերիկայի ամբողջ հյուսիսային մասը,—
ինչպես ալժմ՝ հնումն ել յերկրիս վրա մարդիկ
եյին ապրում: Միայն նրանք վատ եյին ապրում:
Յերեխաները մեռնում եյին գիշատիչ թռչուն-
ների ճիրաններում, մեծերին պատառոտում եյին
գաղանները, և բոլորը տանջվում եյին քաղցից
և ցըտից:

«Վատ եր ապրում մարդն այդ հին, անցյալ ժա-

* Ալեռուտ—Հյուսիսային Ամերիկայում ապրող վայրենի ժողո-
վուրդ:

մանակներում: Նա անսպաստան եր, ինչպես գալ-լը, անոգնական՝ ինչպես ճիճուն. և ամենքը նե-ղացնում եյին նրան: Միայն մի ապստարան ուներ մարդը — թշնամիներից նա թագ եր կենում ժայռերի միջև լեղած ճեղքերում և մեծ ծառերի սաղարթների մեջ: Սակայն ժայռերի մեջ ել գտնում եյին մարդկանց ագահ գաղանները, և ծառերի սաղարթներում ըռնում եյին նրանց գիշատիչ թուչունները: Յեվ միայն մի եյակ խրդ-գիշատիչ թուչունները: Յեվ միայն մի եյակ խրդ-գիշատիչ թուչունները:

«Յերկար տարիներ նա նայում եր ժայռի վրաից մարդկանց վատ կյանքին և չերիմանում, թե ինչնվագ ոգնի նրանց: Ազուամն իր ամբողջ կյանքում վորոնում եր այն ուժը, վորով մարդը կյանքում վորոնում եր այն ուժը, վորով մարդը պիտի կարողանար հաղթել իր թշնամիներին: Վերջապես ծերության որերում Ելը գտավ իր այդ վորոնածը: Ազուամն մտարերեց, վոր շատ հեռուն, արևելքում, Խաղաղ ովկիանոսի մեջտեղում, միայնակ կանգնած մի կղզի կա, վորի վրա բարձրանում ե մի զարհուրելի լեռ, ծիրանա-գույն հավերժական թագը գլխին և կրակ ե շնչում: Շատ դժվար եր վորոնել, գտնել այդ կղզին, վորովհետեւ նա գիշեր-ցերեկ ծածկված եր մարդկանց աչքերից մոխրագույն մշուշի վա-րագուրով:

«Ել. Ազուամն ծերության որերում մարդկանց ոգնելու հուսով թռավ հեռավոր, անտեսանելի լերկրներ՝ վորոնելու խորհրդավոր կղզին: Ազուամն յերկար թռավ ովկիանոսի վրայով, յերկար վի-ճեց ծովի սառն ալիքների վրա փչող ուժեղ քա-միների հետ: Միմիայն մարդկանց տանջանքի կարեկցությունն եր վոր ամոքում երնրա ուժերը, նրանց տխուը կյանքը թեթևացնելու ցանկու-թյունն ուժեղացնում եր նրա լեռանդը: Յեվ ահա ծովալին խիստ քամին փոխարինվեց մե-ռելային լոռությամբ, և մոխրագույն մշուշն ան-թափանցիկ ամպով կախվեց ծովի վրա: Սակայն Ել. Ազուամն կանգ չառավ մշուշային մառախուղի մեջ և շարունակեց իր վորոնումները:

«Հանկարծ Ելի ականջին դիպչում ե ծովի կա-տաղի պլճալըճոցը: Նա արագությամբ իջավ ներ-քե և անսուրացած մշուշի միջից տեսավ զարհու-րելի լեռան ծիրանագույն թագը: Նրա շուրջն սպիտակ շերտով պլճալըճում եր ջուրը: Ելը ծի-ծեռնակի պես բարձրացավ լեռան վրա, թոչելով վերցրեց նրա գագաթից բոցավառ ածուխը և լետ դարձավ:

Ազուամն ամենայն ուժով սլանում ե: Նա աշ-խատում ե տանել բոցավառ ածուխը մինչև ափը և տալ մարդկանց կրակը: Սակայն տանելն ա-վելի դժվար եր, քան գտնելը: Ծովալին քամին

բորբուժ եր բոցը և վառում կտուցը։ Մաշող
ծուխը կուրացնում եր աչքերը և ստիպում Ագ-
ուավին թափել արցունք արցունքի յետեից ծովի
սառն ալիքների մեջ։ Վառվող կտուցի տանջող
ցավը մաշում եր մարմինը, իսկ հոգնած թևերը
հրաժարվում եյին ծառալել։ Յեզ միայն տանջ-
վող մարդկանց ոգնելու միակ ցանկությունը
քշում եր Ելի զլիսից բոցավառ ածուխը դեն
շպրտելու միտքը։ Վերջապես Ազուավը լարեց իր
վերջին ուժերը և ոլացավ ամենայն արագու-
թյամբ։

«Հազիվ հրաշալի Ելը կարողացավ հասնել ա-
փին, յերբ նրա ալրված կտուցը պրծավ և իր
բեռի հետ ընկապ գետին։ Ածուխը գետին չհա-
սած հանգավ, միայն նրանից փոսկեցող կայծեր
թափվեցին քարերի և ծառերի վրա և կորան
նրանց մեջ։ Իսկ տանջված Ագուավն ընկապ իր
բեռի յետեից և մեռավ։»

Ալեռուտ ծերունին փոքր ինչ լոեց և հետո հա-
ռաչելով առաց։

«Ահա ալսպես մեռավ մարդկանց համար հրա-
շալի Ել Ագուավը։ Սակայն նա կարողացավ անել
ցանկացածը։ Մարդիկ տեսան, թե ինչպես ա-
ծուխից կայծեր թափվեցին և կորան քարերի և
ծառերի մեջ։ Նրանք սկսեցին ձեռք բերել այդ
կայծերը քարը քարին խփելով և փալտը փայ-

կտին քսելով։ Բորբոքելով կայծերը՝ նրանք կրա-
արին, խարույկ վառեցին։ Կրակն սկսեց տա-
քացնել նրանց վատ յեղանակին, պաշապանել
թշնամիներից։ Հրաշալի Ագուավը մեռնելով՝ բե-
րեց մարդկանց ինչ վոր կամենում եր՝ անպար-
տելի գենք և հավատարիմ բարեկամ։ Ահա թե
ինչպիսին ե յեղել Ել Ագուավը, — ավարտեց իր
պատմությունը ալեռուտ ծերունին, վոր անցել
եր Աւերիկայի ամբողջ հյուսիսային մասը։

Ալեռուտների մեջ բերնե բերան անցած այս հե-
քիաթում շատ մտացածին բաներ կան։ Միայն
ճշմարիտ ե այն, վոր յեղել ե մի ժամանակ, յերբ
մարդիկ չեն իմացել, թե կրակն ինչ ե։ Մար-
դիկ տեսնում եյին կայծակը յերկնքում, տեսնում
եյին անտառի հրդեհները, վոր առաջանում եյին
կայծակից, բայց իրենք վախենում ելին կրակից։
Շատ ժամանակ եր հարկավոր, վոր մարդն ըն-
տելանար կրակին և այլևս նրանից չվախենար։

Ավելի խելահասները տանում ելին անտառի
հրդեհից խանձողներ և խարույկներ վառում։
Բայց հաճախ պատահում եր, վոր կրակը հանգ-
չում եր։ Այդ ժամանակներում բոլոր չափահաս-
ները զնում եյին ուտեստ վորոնելու, իսկ խա-
րույկի պահպանությունը հանձնում եյին յերե-
խաներին։ Պատահում եր, վոր յերեխաները
խաղով ելին ընկնում և մոռանում եյին խարույկի

Վրա փայտ դնել, և մարդիկ մոռւմ ելին առանց
կրակի, իսկ ինչպես ձեռք բերել՝ չգիտեյին,



Նկար 2. Կալլենբինի կրակ են անում

Դեպքը նրանց սովորեցրեց: Նրանք նկատեցին,


վոր քարե կացին կամ դանակ կերտելիս այնպիսի
կայծեր են յերեւմ, վորպիսիներ առկայծում
են խարույկից. Նրանք նկատեցին նույնպես,
վոր, յերբ փայտե կոթի մեջ ծակ ելին ուզում
բանալ կացնի համար, փայտը տաքանում եր
և նույնիսկ վառվում. Այսպիսի դեպքերը մարդ-
կանց այն միտքը ներշնչեցին, վոր իրենք կարող
են կրակ անել: Յեզ հիրավի, սկսեցին անել.
կրակ ելին հանում քարը քարին խփելով կամ
մի սրածայր փայտ մի ուրիշ փայտի վրա պըտ-
տեցնելով՝ մինչև վոր կվառվեր:

Սկզբում մարդը միայն պահապանն եր այն
կրակի, վոր ընկել եր յերկնքից. այժմ նա տեր
ե կրակին, կարող ե անել՝ յերբ ուզենա: Կրա-
կին տիրելը մարդկանց անթիվ բարիքներ տվեց:

Կրակը յերկարացրեց մարդկանց համար ժա-
մանակը. նա նրանց համախըմբեց, նրանք յե-
րեկոները հավաքվում եյին խարույկի շուրջը և
մի վորես գործով զբաղվում, զանազան գործիք-
ներ շինում, հանգերձ, զարդարանք պատրաս-
տում: Վառվող խանձողը մարդու ձեռքում
դարձավ ամենահուսալի զենքը գիշակեր գազան-
ների դեմ: Քարայրի առջև վառված խարույկը
պաշտպանում եր մարդկանց չորքոտանի թշնա-
միներից:

Մարդիկ սովորեցին կրակի վրա կերակուր

պատրաստել - փափկացնել, խորովել, յեփել, Դը-
րանից առաջ մարդիկ, մինչև անդամ յերեխա-
ները, նույնիսկ յանկիկներն, ստիպված եյին
հում կերակրով բավականանալ:



Նկար 3. Կրակ անելու գործիք

Կրակն աղատեց մարդկանց կլիմայի նախկին
տիրապետությունից: Խարույկը տաքացնում եր
նրանց ցուրտ յեղանակին: Կրակը հնարավորու-
թյուն տվեց ցուրտ յերկրներում բնակվելու:

Այժմ մեզ համար շատ հեշտ բան ե կրակ
անելը: Բավական ե վերցնենք մի տուփ լուցկի
կամ ինքնավառ (зажигалка), և միքանի վայր-
կւանից կրակը կպլազ մեր ձեռքում: Սակայն,
հիմա յել վայրենի և կիսավարենի մարդիկ կան,
ինչպես, որինակ, ալեռուտները, վորոնք կրակ

են անում վայտը վայտին քսելով: Կրակ անելու
ուրիշ միջոց նրանք չգիտեն: ինչպես չգիտեյին
մի ժամանակ և մեր հեռավոր նախնիքը: Առանց
կրակի տիրապետության մարդիկ չեյին կարող
դուրս գալ իրենց նախնական դրությունից:

4. ՀԻՍՈՒՆ ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ԴԵՊԻ ՅԵՏ

Ճրաշալի գլուտ. — Ժայռի գեպի գուրս ցցված
մասում նստած եյին յերկու նախնական մարդ.
մի տղամարդկ' Ուգ-Լոմի և մի կին՝ Յուղենա:
Դրանք դեռահաս, ուժեղ և ճարպիկ վայրենիներ
եյին:

1003
1034

Յերեկ նրանց հաջողվել եր մի մեծ վտանգից
խուսափել: Նրանց յետեկից ընկել եյին իրենց
թշնամի, նույնպիսի վայրենի մարդիկ և սպառ-
նում եյին անողորմ մահ: Քիչ եր մնացել վոր
թշնամիները հասնեյին նրանց: Մինչև անգամ
Յուղենան վոտից սաստիկ վիրավորվել եր քա-
րով, բայց և այնպես բախտ եր ունեցել վախ-
չելու:

Այժմ Ուգ-Լոմին և Յուղենան հանգստանում
եյին: Նրանք ուրախ եյին, վոր կարողացել եյին
վախչել: Ուրախ եյին նաև, վոր քարով սպա-
նել եյին մի սկյուռ և նրանով լավ կշտացել:

Յուղենայի վիրավորված վոտն այնպես փայ-
տացել եր, վոր ստիպված եր յեղել ամբողջ որը

պառկած անցկացնել: Ուգ-Լոմին ել մնացել եր
մոտը: Ահա այս ժամանակ ժայռի վրա նա նը-
կատեց մեծ, ցցված կայծաքարեր, այնքան մեծ,
վորպիսին դեռ կյանքում չեր տեսել: Նա հա-
նեց նրանցից միքանիսը և սկսեց տաշտշել, վոր-
պեսզի թշնամիների նոր հարձակման դեպքում
զենք ունենա պաշտպանվելու: Զոկելով կայծա-
քարերը, մինի վրա մի կուշտ ծիծաղեց: Յուղե-
նան նույնպես ծիծաղեց, և նրանք խաղալով
միմյանց ձգեցին այն: Այդ կայծաքարի մեջ մի
ծակ կար: Նրանք անց եյին կացնում մատներն
այդ ծակի մեջ և հանաքներ անում: Հետո նրանք
սկսեցին այդ ծակի միջով իրար նայել: Մեկ ել
հանկարծ մի փայտ վերցրին և սկսեցին նրանով
շարժել այս անհեղեղ կայծաքարը: Ուգ-Լոմին
հանկարծ փայտը կոխեց ծակի մեջ և տեսավ,
վոր այլևս դուրս չի գալիս: Այս նրան փոքր
ինչ զարմացրեց և նույնիսկ վախեցրեց, այնպես
վոր մի առ ժամանակ դադարեց նրան ձեռք
տալուց: Նրան թվում եր, թե կայծաքարը կծել
ե փայտին և ատամներով ամուր բռնել: Բայց
հետո ընտելացավ այս տարորինակ յերեռյթին:
Նա սկսեց շարժումներ անել այդ փայտով և նը-
կատեց, վոր դա, ունենալով ծայրին ծանը կայ-
ծաքար, ավելի լավ հարվածներ ե տալիս, քան
իր ունեցած բոլոր զենքերը: Նա ուրախ-ուրախ

առաջ ու յետ եր գնում և փայտով շարժումներ
անում և խփում ինչի վոր պատահում եր: Վեր-
ջապես նա սր սնից ձանձրացավ և դեն ձգեց:

Թեև Ուգ-Լոմին դեն ձգեց իր զարմանալի
կայծաքարը, սակայն նրան չմոռացավ: Հաջորդ
որը նա նորից վերցրեց այն և սկսեց սրել: Այս
անելով նա ըստ յերեռյթին, կենտրոնացած
մտածում եր, Սրած ծայրով զենքը նրան ավե-
լի ևս դուր եր գալիս: Հետո վերցրեց ճագարի
կաշու յերիդներ և կապեց կայծաքարը փայտի
ծալրին ու հիացավ:

Նրան շատ հարմար եր ձեռքում բռնել այս
նոր, հարմար և ծանը զենքը:

Այս յեղավ մարդկության քարե կացինը...
Միքանի որից այս կացինը շատ լավ պետք է-
կավ Ուգ-Լոմին և Յուղենալին:

Զարհուրելի կոհվ.—Խոր գիշերը տիրում եր
յերկրին: Ուգ-Լոմին քնած եր ժայռի դուրս
ցցված մասում, իսկ Յուղենան նստած եր խա-
րույկի մոտ, ականջ դնելով գաղանների զանա-
զանակերպ ձայներին: Ներքենում գետը շարու-
նակում եր իր անվերջ կարկաչանքը, և գիշեր-
վա աներեռյթ եյակներն անաղմուկ վազվզում
ելին այս ու այն կողմ: Զայլելի լուսինը բարձրացավ յերկնակամարի
վրա, և նրա դժգույն խորհրդավոր լույսը լու-

սավորեց, վերջապես, ապառաժի սպիտակ, սուր գագաթը: Գէտի հովիտը դեռևս մնում եր կատարյալ խավարի մեջ և նույնիսկ յերեռւմ եր ավելի մռայլապատ ու դաժան: Փոքր առ փոքր լուսնի լուսին սկսեցին աննկատելի կերպով խառնվել մոտեցող արշալուսի թեթև յերփերը: Յուղենայի աչքերը շարունակ դառնում եյին նրա գլխի վերև բարձրացող ժայռի գագաթը:

Թեև նրա յուրաքանչյուր նայվածքի միջոցին ժայռի ուրվագիծը նկարվում եր յերկնքի ֆոնի վրա վորոշ և մեկին կերպով, սակայն նրան բաց չեր թողնում մի տարտամ նախազգացում, թե մի ինչ վոր վտանգ թագնված ե այնտեղ:

Խարույկի կարմիր բոցը հետզհետե մթնագունում եր և ծածկվում մոխրագույն շերտով: Ծխի ուղղահայաց սլունն ավելի և ավելի նկատելի յեր դառնում, և մինչեւ այդ ժամանակ աննկատելի մնացած իրերն սկսեցին ավելի և ավելի պարզ վորոշվել հովիտի աղոտ լուսավորության մեջ: Աննկատելի կերպով նա սկսկեց ննջել, սովորականի նման պըպըզած:

Հանկարծ նա վեր թռավ և ուղղվելով ու ականջները սրելով հետազննող հալացը ձգեց ժայռի վրա վերևից մինչեւ ներքեւ:

Նա արձակեց հազիվ լսելի մի խուլ ձայն, և Ուգ-Լոմին, վորի քունը շատ թեթև եր, ինչպես

կենդանիներինը, մի ակնթարթում արթնացավ: Նա վերցրեց իր կացինը և անձայն կանգնեց նրա մոտ:

Դեռ բավական մութն եր: Յերկըի վրա ձգվում եյին լուսնկա գիշերի սկ ու մութ-մոխորգույն ստվերներ, իսկ յերկնքի վրա դեռևս փայլում եր ուշացած վերջին աստղը: Ժայռի դուրս ցցված մասը, վորի վրա գտնվում եյին նրանք, ներկայացնում եր խոտ բուսած մի փոքրիկ տարածություն, մոտ 6 ֆուտ լայնությամբ և 20 յերկարությամբ: Նրա դեպի հովիտ իջնող կողի վրա բուսել եյին հասարակ սգածաղիկներ (чернобыльник): Սրանց տակ փափուկ, սպիտակ ժայռը մոտ 50 ֆուտ սուր զարիվայրով իջնում եր ներքեւ և վերջանում ընկուզենիների խիտ շորքերով, վորոնք յեղբափակում ելին գետը:

Ժայռն Ուգ-Լոմիից 40—50 ֆուտ բարձրության վրա առաջ եր ցցվում ահազին կոշտերով, վոր բնորոշ են կավային կազմություններին: Խոր, ուղղահայաց ձորը կըտրում եր նրա մակերեսութը: Նրա վրա բուսել եյին փոքրիկ թփեր, և սրանց ոգնությամբ Յուղենան և Ուգ Լոմին կարողանում եյին բարձրանալ և իջնել:

Այս յերկուսը թագ կացան, վորպես վախեցած յեղջերուների մի զույգ և հառած սպասում

Եյին։ Մի վալրկյան նրանք վոչինչ չեյին լսուժ, բայց հետո բարձրից նրանց հասավ թափվող հողի մի թույլ ձայն և ճյուղերի ճայթուն։

Ուգ Լոմին վերցրեց կացինը և մոտեցավ ժայռի դուրս ցցված մասի ծայրին, վորովհետեւ նրա գլխի վերև կախված կավճային կոշտերը ծածկում եյին ձորի վերին մասը։ Նրա սիրտը հանկարծ ճալվեց։—Նա տեսավ քարայրի արջին, վոր իջնում եր գագաթից իրենց մոտ։ Տեսավ արջին, քարայրերի և ժայռերի տեր ու տիրականին։ Նրա լետեսի տափակ տոտիկներն ուղիղ Ուգ-Լոմիի վերեն եյին։

Արջը ճանկերով այնպես բռնել եր քարերից և թփերից, վոր կարծես կատարելապես կպել եր ժայռին։ Բայց սրանով բոլորովին չեր պակասել նրա ահռելիությունը։ Լալրծուն յերախից սինչեւ հաստարմատ պոչը նա կլիներ առյուծից մեկուկես անգամ մեծ և յերկու անգամ բարձր մեծ մարդուց։ Նա նայում եր Ուգ-Լոմին իր ուսի վրայից, նրա ահագին յերախը դուրս ցցված լեզվով բացված եր։ Նա ծանր եր շնչում, ջանալով հավասարության մեջ պահել իր ծանր մարմինը...

Արջը հենման կետ գտնելով՝ կամացուկ փոքրինչ ցածրացավ։

«Արջ» — բացականչեց Ուգ-Լոմին, նայելով շուրջը յերկուղից սպիտակած յերեսով։

Յուղենան սոսկալի յերկուղին աչքերում մատով ցուց տվեց դեպի ներքեւ։

Ուգ-Լոմին նայեց, և նրա բերանից թռչող յերկուղի բացականչությունը սառեց նրա շըրթունքների վրա։ Այստեղ ներքեռում, իր առաջին թաթերով ժայռին հենված կանգնած եր մի ուրիշ, ահագին մոխրագույն մի մսի գունդ — սաեղ արջ եր։ Թեև նա վորձ արջից փոքր եր, սակայն և այնպես մի ահագին կենդանի յեր։

Ուգ-Լոմին սարսափի աղաղակով հավաքեց ժայռի ցցված մասի վրա ցըված ձարախոտից մի բուռ և ձգեց հանգչող խարույկի մեջ։ «Կրակ յեղբայր», — բղավեց նա, — «Կրակ յեղբայր»։ Յուղենան նույնպես դուրս յեկավ իր անգայացած դրությունից և սկսեց ոգնել նրան։ «Կրակ յեղբայր, ոգնիր, ոգնիր, Կրակ յեղբայր»։

Խարույկի սիրառ դեռևս տաք եր, բայց կրակը բոլորովին հանգել եր։

«Կրակ յեղբայր», — սարսափահար բղավում եյին նրանք, Բայց խարույկը հանգել եր, և նրանց առջև այժմ միայն փուլած եր մոխիրը։ Ուգ-Լոմին կոխրտեց վոտերով և բոռնցքով խփեց մոխիրին։ Յուղենան սկսեց կայծաքարով կրակ անել։ Նրանց աչքերը կարծես բեկեռված ելին ձորի այն շովով վրա, վորով իջնում եր գագանը։

Արջի ահագին բրդուա թաթերը յերկում ելին
կավճային կոշտերի յետեռում։ Նա դեռևս զգու-
շությամբ սողալով իջնում եր ապառաժի հա-
մարյա ուղղահայաց լանջով։ Նրա գլուխը չեր
յերկում, բայց նրանք պարզ լսում եյին նրա
խուլ բարբաջանքը։

Յուղենան, վերջապես, կայծաքարով կրակ
արեց։ Ծառի ճյուղը վայրկենաբար վառվեց և
նորից հանգավ։ Նա դեռ ձգեց հուրճանն ու
կայծաքարը և սարսափից անզգայացավ։ Հետո,
վոտի կանգնելով, $1\frac{1}{2}-2\frac{1}{2}$ արշին մազլցեց ժալ-
ովի վրա։ Նա ինչպես կարող եր ալստեղ գոնե
միքանի բոպե կախված մնալ, քանի վոր ժայռը
բոլորսվին ուղղահայաց եր, և նույնիսկ կապիկը
չեր կարող մի վորեն բանից բռնել ու կանգնել։
2.3 վայրկանից նա արյունլվիկ ձեռքերով յետ
թռավ իր տեղը։

Ուգ-Լոմին կատաղած առաջ ու հետ եր
գնում։ Նա վազում եր մեկ գեպի ժալուի ցցված
մասի յեզրը, մեկ գեպի ձորը։ Նա չգիտեր թե
ինչ անե, նա չեր կարողանում մտածել։

Յուղենան ժայռի քթին կպած ճշում եր
ինչպես բռնված ճագար։

Այս ճշոցի միջոցին մի ինչ-վոր բան, խե-
լագարի պես, ընկավ Ուգ-Լոմիի վրա։ Սոսկալի
վողբով նա վերցրեց իր կացինը և հարձակվեց

արջի վրա։ Հրեշը մոնչաց զարմացմամբ, Մի
վայրկյանում Ուգ-Լոմին կախվեց թփից ուղղակի
կի արջի վրա և թռավ նրա մեջքին, կիսով չափ
թաղվեց նրա մորթու մեջ և մի ձեռով բռնեց
գազանի կոկորդի թավոտ մազերից։ Արջն այս
անակնկալ հարձակումից այնպես հարվածահար
յեղավ, վոր չդիմադրելով շարունակեց կախված
մալ։ Յեզ հանկարծ կացինը—մարդկային կա-
ցիններից առաջինը—կպավ նրա գանգին։

Արջի գլուխը բժժեց, և նա սոսկալի մոըն
չաց։ Կացինը կտրեց մի դույմ խորությամբ
նրա կաշին ձախ աչքի կողմից, և տաք արյունը
կուրացրեց նրան այս կողմից։ Նոր հարված
ստանալով՝ արջը նորից մոնչաց և բարկացած
ու զարմացած կրծտացրեց ատամներն ուղղա-
կի Ուգ-Լոմիի յերեսի հանդեպ։ Կացինը մի ան-
գամ ևս բարձրանալով, իջավ նրա ծնոտին։

Հաջորդ հարվածը կուրացրեց նրա աջ աչքը և
առաջացրեց նոր մոնչյուն, ալս անգամ ար-
դեն ցավից։ Յուղենան տեսավ, թե ինչպես ար-
ջի ծանրակշիռ, տափակ թաթերը սահեցին և
սողացին ներքեւ, իսկ ինքն անշնորհք կերպով
ցատկեց, կարծես ցանկանալով ընկնել ժայռից
դուրս ցցված մասի վրա։ Հետո բոլորն անհե-
տացան, տարածվեց կոտրատվող կաղնիների
ճայթյունը, և ներքեւից լսվեցին արջի ցավագին

մոնչունը միախառնված մարդու աղաղակի հետ,

Յուղենան լալով վազեց դեպի ժայռի ցցված մասի ծալը և նալեց ներքեւ։ Մի վայրկյան նրան թվաց, թե յերկու արջ և մի մարդ խառնվել ենմի կույտի մեջ։ Ուգ-Լոմին պառկած եր վերեռմ։ Հետո այդ մարդը վեր թռավ և սկսեց մագլցելով բարձրանալ ձորից, մինչդեռ արջերը միմյանց հետ կովում եյին կաղնիների մեջ։ Նրա կացինը մնացել եր ներքեռմ։ Նրա կողքից յերեք տեղով արյուն եր հոսում։ «Վերև», — գոչեց նա, և մի ակնթարթում Յուղենան սկսեց մագլցելով բարձրանալ նրա առջեւ ժայռի գագթը։

Կես վայրկյանից նրանք աբդեն մագլցել եյին ժայռի վրա։ Նրանց սրտերը սաստիկ բարձրախում եյին, բայց նրանք արդեն ապահով դրության մեջ եյին, վորովհետև յերկու արջն ել հեռու ներքեռումն ելին։ Արջը նստել եր յետին վոտների վրա և, աշխատելով առաջի թաթերով, արագ, հուսահատ շարժումերով տրորում եր իր արյունով լցված և կուրացած աչքերը։ Զարդված եղ արջը կանգնած եր չորս թաթերի վրա փոքր ինչ հեռու և դառնագին մոնչում եր։ Ուգ-Լոմին յերեսի վրա ընկել եր գետնին և յերեսը ձեռների մեջ առած պառկած եր արյունաշաղաղախ, դժվարությամբ շունչ քաշելով։

Յուղենան մի անգամ ել հայացք ձգեց արջերի վրա և հետո մոտենալով Ուգ-Լոմիին՝ նստեց նրա մոտ և նայում եր նրան…

Հետո նա ամաչելով մեկնեց ձեռքը և հպվելով նրան՝ արձակեց մի կոկորդալին ձախ, վոր նշանակում եր նրա անունը։ Նա դարձավ դեպի Յուղենան և բարձրացավ՝ հենելով արմունկները գետնին։ Նրա յերեսը դժգույն եր, ինչպես մահմերձ վախեցած մարդու։ Մի վայրկյան հառած նալեց նա նրան և հանկարծ ծիծաղեց, «Հով», — հաղթանակով բացականչեց նա։

«Հով», — բացականչեց Յուղենան։

Այս յեղավ նրանց պարզ, բայց և պերճ խոսակցությունը։

5. ՔԱՐԱՅՐԵՐՈՒՄ

Տղերք, յերբեմիցի տեսել եք, արդյոք, մի վորեանստառում կամ գետի ափին բարայր։ Հետաքրքրական ե նայել նրա մեջ, թե ինչ ե կատարվում այնտեղ, բայց զարհուրելի յե մտնել քարայրի մութ անցքով։ Այս յերկյուղը համարյամիշտ վոչնչացնում ե հետաքրքրությունը։

Վոչ միայն յերեխաներդ, այլ և հասակավորները յերկյուղ են զգում, յերբ բավականաչափ ներս են մտնում քարայրի մեջ՝ նունիսկ որը յերեկով։ Թեև գիտեն վոր այնտեղ վոչ մի վտան-

գավոր բան չկա, սակայն և այնպես՝ յերկյուղ
են կըում, Վոչվոք չգիտե թե ինչից ե առաջա-
նում այդ յերկյուղը, Գուցե ալդ մնացել ե մարդ-
կանց մեջ այն հին ժամանակներից՝ յերբ.. . բայց
ավելի լավ ե կարդանք հետեւալ պատմվածքը մեր
հեռավոր նախնիքների կյանքից. գուցե ալդ բա-
ցատրի մեզ, թե վորտեղից ե առաջանում այդ
անհասկանալի յերկյուղը:

Աև ծուխը քուլա քուլա բարձրանում եր
բարայրի լայն, մութ անցքից. Գետափի այս ու
այն կողմին թափված ելին քարերի ահազին
կույտեր, բարձրում աճում եր դարավոր անտա-
ռը և հասնում մինչև ձորը: Տեղ տեղ ձորից
քաշ եյին ընկել վորպես հանգույցավոր սև թո-
կեր ծառերի բացված արմատները. Քարալրից
փոքր ինչ հեռու ընկած եյին մի քանի ահազին
ծառեր. պարզ ե, զվոր խորտակվել ելին փոթոր
կից: Դրանք շատ եյին մոտեցել ձորի ափին.
Հողը թափվել եր, արմատները թուլացել եյին և
կատարի քամին տապալել եր ալդ հսկաներին:

Ամբողջ տարածությունը մոայլ և ամայի տեսք
ուներ. միայն քարալրի անցքից բարձրացող ծու-
խը ցույց եր տալիս, վոր այդտեղ մարդիք են
ապրում: Ահա նրանք. ձորի գլխին կանգնած ե-
րին յերկու մարդ, բարձրահասակ ու քաջակազմ,
միմյանց շատ նման, յերկուսն ել սև մորուք ու

սև մազեր ունեյին, իսկ ուսերին ձգված եյին
դազանների մորթիներ, մեջքներին՝ կաշվե փոկ
կապած:

Մինի ձեռին քարե կացին կար, իսկ մյուսի՝
բացի կացնից՝ աղեղ և մի քանի նետ: Նրանք
դատարկ ձեռքով չեյին վերադառնում տուն.
մինը թուչուն եր բերել, մյուսը՝ յեղնիկ:

Վորսորդները իջան ձորը և, անցնելով քարա-
կույտերը, գնացին դեպի քարայրը: Քարայրից
մի 10 քայլ հեռու վորսորդներից մինը մի բարձր
ձայն աձակեց, վոր հաջողություն եր ար-
տահայտում: Այս ձայնի վրա քարայրից դուրս
վազեցին յերեք յերեխաներ, իսկ սրանց հետեւից
յերեացին մի կին և մի ծերունի: Նրանք ել
նույնպես մորթի ելին հտպած: Բոլորը վողջու-
նեցին վորսորդներին ուրախ աղաղակներով:
Յերեխաներն ուրախությունից ճշցին և քիչ
մնաց, վոր կովեյին միմյանց հետ, ցանկանա-
լով իրենք տանել սպանված թուչունը:

Կերջապես մտան քարայրը. այնտեղ, անցքից
փոքր ինչ հեռու, վառվում եր ոջախը, մի ան-
կյունում փոփած ելին մի քանի մորթիներ. վոր
այդ մարդկանց ծառայում ելին վորպես անկո-
ղին:

Կինն իսկույն գործի անցավ. նա քարե դա-
նակով քերթեց ու կտրտեց յեղնիկը, և սկսեց

Խորովել տաքացած քարերի և կրակի վրա։ Խորովուն շուտով պատրասվեց, բայց խեղճերը չկարողացան հանգիստ վայելել։ հանկարծ քարարի անցքի քարերը շխշխկացին, լսվեց մոնչուն և քարայր մտավ մի ահռելի արջ։ Նա յերախը բացեց և գլուխը մեկ այս մեկ այն կողմը դարձրեց, կարծես ընտրելու, թե վհրին նախ լափի։ Այս բավական չեր՝ յերեցան ուրիշ յերկու գլուխներ ել դայակի և քոթոթի։ անսպասելի հյուրերը ամբողջ ընտանիքով ելին շնորհ բերել։

Մարդիկ այս հյուրերին տեսնելով յերկուղից սարսափեցան ու քարացած մնացին անշարժ կանգնած իրենց տեղում։ Այս արջերը քարայրային ելին կոչվում վորովհետև մարդկանց նման քարայրերում ելին բնակվում։ Մարդիկ բռնագրավեցին քարայրերը և արջերի հետ շարունակ կոփվ ելին մղում։ Քարայրայինները այժմյաններից չելին։ Նրանք շատ ավելի ուժեղ ելին ու կատաղի։

Առաջինը արջին ավելի սոտ գտնվող վորսորդըն ուշքի յեկավ։ բարձր աղաղակով վոտքի կանգնեց և կացինը ձեռն առավ։ Բայց հենց այդ ըոպեյին արջը թաթով խփեց նրան ու գետին գլորեց։ Խեղճի գլուխը քարին խփվեց ու մնաց անշարժ ընկած, կացինը վայր ընկավ նրա ձեռից։ Արջն ուղում եր հարձակվել այն ձերունու վրա։

Վոր ուղում եր ձեռը մեկնել կացնին։ Բայց այստեղ մյուս վորսորդը նրան փրկեց։ Նա ծանր մահակը ամենայն ուժով հասցըրեց արջի գլխին։ Ծանր հարվածից շշմած գազանը հետ քաշվեց, բայց հետո կատաղի մոնչունով նորից հարձակվեց, արջին հետեւեց և դայակը։ իսկապես մարդկանց բանը բուրդ կլիներ, յեթե նրանց չոգնելին կացինները և մահակները։ Ասենք մահակներով այդպիսի թշնամիններին չի կարելի վախեցնել, բայց ուր վոր ծանր մահակը անզոր եր գտնվում՝ այնտեղ փոքրիկ խանձողն եր բան տեսնում։

Կինը ոջախից վերցըրեց այրվող խանձողը և զցեց դեպի արջը։ խանձողը ուղղակի գլխին դիպավ։ կալծերը ցըվեցին և թափկեցին արջի բաց յերեսն ու աչքերը, Քարայրի արջը անհամեմատ ավելի ուժեղ եր, բայց չեր կարողանում դիմադրել այդպիսի զենքին։ Արջը տընկանկացը գլուխը, մոնչաց, բայց արդեն վոչ թե կատաղությունն, այլ յերկուղ եր հնչում նրա մոնչունի մեջ։ Այս հարվածից դեռ ուշքի չեր յեկել, յերբ յերկորդ խանձողը թռավ ու դայակն ել զուրկ չմնաց հարվածներից։ արջերը հետ դարձան և խելակորուլս փախան քարայրից։ Հաղթանակը մնաց մարդկանց։ նրանք պաշտպանցին իրենց բնակարանը։

Իսկ ինչ յեղավ վիրավորված վորսորդը: Նա շուտով ուշը լեկավ. բարեբախտաբար վերքը վտանգավոր չեր: Նրան փրկել եր գաղանների մորթուց պատրաստված հանդերձը, վորը թուլացրել եր արջի թաթի հարվածը: Ճիշտ ե նրա գըլխի վրա առաջացել եր ուռուցք, բայց գանգը անվտանգ եր մնացել: Յերկու յերեք որից նա նորից վորսի եր գնացել, կարծես վոչինչ չեր պատահել:

Սակայն բնակարանի առթիվ մղված կոփը մարդկանց համար միշտ հաջողությամբ չեր վերջանում. Նրանցից շատ շատերը ընկել ելին քարայրերի նախկին բնակիչների—արջերի և առյուծների թաթերի տակ:

Զրույցի յեվ օարագրության համար:—Մարդիկ ինչով հաղթեցին քարայրերի բնակիչներին—դիշակեր գաղաններին:

6 ՃՅՈՒՂԵՐԻՑ ԲԱՍԿԱՐԱՆ.

Վայրենի գաղանավորսը խղճուկ զենքը ձեռքին սարուձոր եր ընկել վորս վորոնելու: Սուրեյին նրա աչքերը, հաջողակ նրա ձեռքերը, հոգնածություն չգիտեյին նրա վոտները, բայց գաղանն ել զգուշ եր և դուրազգաց, հեշտ չեր նրան վորսալ: Վորսի հետևից ընկած գաղանավորսը կամաց-կամաց բավական հեռացավ իր կայանից.

ասենք նա չեր ել մտածում նորից վերադառնալու այնտեղ, նրա միտքն ամբողջովին զբաղված եր սպանելու մի վորսե գաղան և հազեցնելու իր քաղցը: Գիշերելու տեղի մասին նա միանգամայն չեր անհանդստանում: Յերեկոյան դեմ վայրենին բախտ ունեցավ սպանելու մի փոքրիկ գաղան. վորսը մեծ չեր՝ սակայն, ընթրիքին բավական եր: Վայրենին միքիչ ցախ հավաքեց, մի քանի կտոր չոր մամուռ գտավ և սկսեց կրակ անել: Գտառուց հանեց ձողը ու տախտակը փոսիկով և սկսեց պտտեցնել ձողը ինչպես գալիկոն (բուրղով): Շուտով տախտակը ծխաց, վայրենին դըեց դըա մոտ չոր մամուռը և սկսեց փչել: Միքանի բոպե՝ և կրակը պատրաստ եր: Վայրենին արգեն պատրաստվում եր խորովելու վորսը, յերբ մի բան խանգարեց նրան. անձրեն սկսեց կաթկաթել, վայրենին վերև նայեց, տեսավ սև ամպերը կուտակվել են, հասկացավ, վոր յեղանակը վատանալու յե, նա կտրեց կանաչ ձյուղեր և խըեց խարույկի շուրջը, այնպես, վոր վերևը կամար ստացվեց: Այս խուղի մեջ, խարույկի կողքին անցկացրեց վայրենին ամբողջ գիշերը: Դրսում թափում եր անձրել, վորի կաթիլները մեկ-մեկ ընկնում ելին խուղի մեջ, սակայն խարույկը չհանգավ, այս ամենակարևորն եր վայրենու համար: Նա զիշակեր

գազաններից ել յերկյուղ չուներ. խաղույկը նրան պաշտպանում եր, ինչպես և տաքաջնում: Առավոտյան անձրել դադարեց, վայրենին թուղեց խուզը և գնաց կրկին վորս վորոնելու:

7. ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՈՐԻՆԱԿՈՎ.

Արել դեռ մայր չեր մտել, բայց անտառում արդեն տիրում եր աղջամուղդ: Անագին ծառերի գագաթները սաղարթներով միացել եյին ու առաջացրել կանաչ կամար, վորի միջով լույսը հազիվ եր թափանցում: Անտառը խուլ միապաղակ ձայն եր հանում, կարծես թախծալից յերգ եր յերգում և բացի այս միատեսակ ձայներից վոչ մի ուրիշ ձայն չեր լսվում անտառում:

Բայց ահա հեռվում լսվեց ցախերի ճրդճրդոցը և ծառերի մեջ յերեացին միքանի մարդ: Մրանք զգուշությամբ առաջ ելին գնում, ուշադրությամբ ու յերկյուղով շուրջը նայելով: Այս մարդկանց միակ զենքը մահակն եր, միակ հանդերձը՝ մի ինչ-վոր բուլսի լայն տերևները փաթաթած գոտու շուրջը:

Այս մարդիկ ուտելիք վորոնելով բավական առաջացել եյին անտառի խորքը և շատապում եյին լուսով գուրս գալ անտառից, վորպեսզի այնտեղ չփշերեյին, ուրեմն, նրանք մշտական բնակարան ունեյին: Վոչ. նրանք բնակարան չու-

նելին, նրանց իբրև բնակարան ծառալում եր մացառը, ուր նրանք գիշերում եյին: Մացառում գիշերն այնպես սարսափելի չե, ինչպես մթին, խիտ անտառում, այնտեղ գոնե յերկինքը յերեւում ե: Ճիշտ ե, գիշատիչ գազանը հարձակվում ե նրանց վրա և քնած ժամանակը, սակայն խիտ ձյուղերն յերբեմն նրանց պաշտպանում եյին գիշակերներից:

Սրանք չորս հոգի եյին, գնում եյին խմբով, մինը գնում եր առաջից. յերեխ դա առաջնորդն եր, վոր միուսներից ավելի լավ եր իմանում ճանապարհը:

Հանկարծ առաջնորդը մի ճիչ արձակեց ու կանգնեց. նրան թվաց, թե մի ինչ վոր կասկածելի խշացոց ե լսում, բոլորը դողացին և աչքերը հառած նայեցին շուրջը: Այսպես անցավ մի ըովե, ամեն ինչ հանգստացավ. միայն բարձրում ծառերի կատարներն ելին սոսսափում: Զուր չեյին վրդովվել. նրանք նորից առաջ անցան, բայց հազիվ միքանի քայլ ելին արել, յերբ հանկարծ շատ մոտից լսվեց մի ահեղ մոնչոց, վորից կարծես ամբողջ անտառը դղբդաց: Մրանից հետո անտառում լսվեց մի սոսկալի ճիչ, ճիչ մահացու սարսափի և ցավի: Այդ հետեւց լեկող մարդու ճիշն եր: Նա գետնին ընկած անոք թպրառում եր գիշակեր գաղանի

ծանրութիւն տակ, վորը իր սուր ճիրաները խոր խրել եր նրա մարմի մեջ:

Մյուսները բոլոր ուժով սկսեցին փախչել: Բայց հեշտ չեր փախչել տնտառով, այն ել աղջամդին: Նրանք դիպում եյին արմատներին վալր եյին ընկնում և ճուղերը քերծում եյին նրանց յերեսն ու մարմինը:

Յերկյուղից և հոգնածությունից շնչասպառ սրանք շարունակում եյին փախչել, իսկ նրանց հետեից լսվում եյին մեռնող ընկերոջ հեկեկանքը: Այս փախչողների սարսափը ավելի սաստկացավ, յերբ լսեցին մի ուրիշ մոնչյուն իրենց առջնից: Պարզ եր, վոր մի ուրիշ դիշատիչ ել գտնվում եր մի քիչ հեռու և իրենց հոտն առել եր:

Առաջնորդը մի վայրկյան կանգ առավ, շուրջը նայեց, և մի վոստյունով թռավ մի ահագին ծառի մոտ, վորի ներքեւի ճյուղերը կարելի յեր հեշտությամբ բռնել ձեռքով: Նա բռնեց ճյուղերը և արագությամբ բարձրացավ ծառը: Ըսկերները հետևեցին նրա որինակին: Նրանք ավելի և ավելի բարձրացան ծառը: Նրանց թվում եր, թե գեռ գետնին շատ մոտիկ են և գաղանը կարող ե իրենց բռնել, Յեվ միայն այն ժամանակ փոքր ի իրենց բռնել, յեր հասան ծառի կատարին: Ամբողջ գիշերը նրանք անցկա-

րին ծառի վրա: Արդեն լուսացել եր, սակայն նրանք սիրո չելին անում իջնելու, և, յերբ արեւ բավական բարձրացավ, նրանք թողին իրենց ապաստանը:

Այնուհետև նրանք այլևս գետնին չեյին գիշերում: Իենց վոր արեւ մայր եր մտնում, նրանք վորոնում ելին սաղարթախտ ծառեր և գիշերում նրանց սաղարթների մեջ: Յերբեմն նրանք մինչև անգամ փոքրիկ խուզ եյին շինում ծառերի վրա՝ ճուղերով ու խոտով:

Այսպես զանազան տեղերում մարդիկ հետրզնետե, մի տեղ վաղ, մի տեղ ավելի ուշ, սովորեցին թագ կենալ գիշատիչ գաղաններից ծառերի վրա: Տղաներն ել սկսեցին մագլցել իրենց ծնողների յետեից: Ծառը բնակարան դարձավ նախնական մարդկանց և յերկար ժամանակ ծառայում եր վորպես տուն:

Մարդկանց շատ սերունդներ մեծացել ելին յերկրից բարձր գտնվող խիտ սաղարթների մեջ: Հետագայում մարդիկ նույնիսկ դիտմամբ շինում եյին բնակարաններ ձողերից ծառերի վրա: Սրանք ըստ սովորության գերադասում եյին տեղավորել իրենց բնակարանները յերկրից բարձր, թեպետ այլևս յերկուդ չեյին կրում գաղաններից: Ծառերի վրա թագնվելու սովորությունը սերնդից սերունդ անցել է մարդկանց

Ժաւանդաշար: Գուցե և հենց այս պատճեռով
մենք մանկության որերին սիրում ենք ծառ
բարձրանալ և թագ կենալ նրա սաղարթների մեջ:

Դեռ այժմ ել Հայաստանում, վոչ միայն գա-
զաններից, այլ և մոծակներից պաշտպանվելու
համար շինուած են ծառերի կամ հատկապես
գետնին խփիված գերանների վրա պատշգամբ և
այնտեղ զիշերում:

8 ԱՌԱՆՑ ԶԳԵՍԻ

Ավատրալիական Մելրուըն քաղաքի գլխավոր
հրապարակում բարձրանում ե մի բրոնզե գե-
ղեցիկ արձան: Այս արձանը ներակայացնում
ե միմյանց հարած յերեք մարդ: Նրանց տեսքը
ուժասպառ, նիհարած ե, յերեսին նկատելի յե-
փիշտ և հուսահատություն, իսկ հանդերձը՝ ամ-
բողջովին ցնցոտիք ե:

Այս արձանը դրված ե անգլիացի Բերկի և
նրա յերկու ընկերների՝ կենդի և Ուելսի, հիշա-
տակին: Սրանք առաջինը վորոշել են անցնել
Ավատրալիայի կենտրոնը իմանալու, թե այնտեղ
բնակվեմ են, արդյոք, մարդիկ, և կարելի յե-
ախտեղ բնակություն հաստատել: Սրանք ուղե-
վորվեցին այնտեղ Մելրուընից 1660 թվին, ոգոս-
տոս ամսին, 15 հոգով: Վերցրին իրենց հետ
բավական մեծ պաշտար, ուղտեր, ծիեր: Բոլորը

հավատացած ելին թե այս ճանապարհորդությու-
նը հաջող կվերջանա, սակայն բախտը ծանը վի-
ճակ եր պատրաստել Բերկին և նրա ուղեկից-
ներին:

Այս խումբը համարյամի տարուց հետո վերա-
դարձավ, սակայն սրա հետ չեր ինքը Բերկը՝
կենդի և Ուելսի հետ: Ճանապարհին նրանք յետ
ելին մնացել խմբից և անհետացել: Շատ շուտ
տարածվեց քաղաքում այս տիսուր լուրը: Շու-
տով կազմվեցին հինգ հետախուզ խմբեր նրանց
վորոնելու:

Այս խմբերը յերկար ժամանակ թափառում
եյին այս անջրտի քարքարոտ անապատում, չպա-
տահելով մարդկային բնակչության: Միայն մի
խումբը անսպասելի կերպով պատահեց քոչվոր
վալրենին՝ ըի՝ Ավատրալիայի բնիկներին. սրանց
մեջ չոր գետնին նստած եր կենդը: Դժվար եր
նրան ճանաչել, նա ավելի կաշիապատ կմախքի
եր նման քան մարդու, կեղտոտ ցնցոտիները քաշ
եյին յեկած վրան, նա այնքան թույլ եր, վոր
չեր կարողանում խոսել: Նրա շուրջը լուռ կանգ-
նած եյին վայրենիները:

Ինչ տարորինակ, վողորմելի մարդիկ ելին
դրանք, փոքր, սաստիկ լղար, բարակ վոտներով
և ձեռքերով, նրանք սեամորթ եյին, խիտ գան-
գուր մազերով. գեղնագույն աչքերը անհանգիստ,

վայրենի հայացք ունեյին: Սրանք ապրում են ուղղակի բաց յերկնքի տակ և վոչ մի զգեստ չեն կրում, նրանք վայրի գաղանների նման վազգում են տեղից տեղ կերակուր վորոնելով: Բոլորն ել բորիկ են մանգալիս. յերեմն սրանք ծառի կեղեից գոտի են կապում և կոներին լայն ողակներ անցկացնում, սակայն դրանք ավելի շուտ զարդարանք են քան զգեստ: Միայն սրանցից շատ քչերը ամենացուրտ յեղանակին իրենց ուսերին ձգում են սպանված գաղանների մորթի:

Վատ, շատ վատ են ապրում այս մերկ վայրենիները:

Ճիշտ ե, նրանց կլիման տաք ե, ցերեկը շոգ և տոթ, սակայն պարզ, անամպ գիշերները ցուրտ ե լինում: Այսպիսի ժամանակ այս սևամորթները կրակ են անում և նրա շուրջը պառկում մերկ գետնի վրա, դողում, կծկվում են ամբողջ գիշերը: Վորոշ ժամանակ ալստեղ փչում ե ծովային ցուրտ քամի, վորը ստիպում ե սրանց կուչ գալ փշոտ թփերի մեջ, կամ հավաքվել քարարներում, ապստանել ծառերի խոռոչներում:

Կենդը շուտով լավացավ: Յերկու որ հետո նա պատմեց, թե ինչպես նա յերկու լնկերների հետ լետ մնաց խմբից, ինչպես թափառեցին անջրտի անապատում, Դրանք այդտեղ այնքան

նեղվեցան հոգնածությունից, քաղցից, տոթից, վոր Բեկն և Ուելսը չկարողացան տանել և մեռան, կենդի ցուցառունքով գտնվեցան ալդ դժբախտ ճանապարհորդների դիակները. Նրանց փաթաթեցին անգլիական դրոշակների մեջ, և տեղնու տեղը թաղեցին, իսկ միքանի տարի հետո Մելբուրնի բնակիչները նրանց, այս յերեքին, գեղեցիկ արձան կանգնեցրին:

Զրուցի յեվ շարագրության համար: — Ինչու ավստրալիացիները հանդերձ չեն կրում, արդյոք — կտոր չկար, թե՛ ուրիշ պատճառով:

9. ԿԵՐԱԿՈՒՐ ՃԱՐԵԼԸ.

Առաջին զենքը. — Զեռքը կարճ ե, բայց ձեռնափայտ յեթե վերցնեն, ձեռքը կերկարի. Թուզ և փափուկ են մատները, բայց յեթե կենդանիների կամ ձկան վոսկը, բար, մահակ վերցնեն, կպնդանան: Այսպիս արավ նախնական մարդը, և ալսպիսով առաջ յեկան առաջին զենքերը: Սրանք իսկապես մարդու ձեռքի և վոտքի, մատների և բռունցքի շարունակությունն ելին, սրանք ավելացնում ելին նրա ուժը:

Մարդն ստիպված եր ամեն որ մտածել կերակրի մասին, խուսափել գաղաններից, կռվել նրանց հետ: Զանազան ժամանակներ յերբեմն այս մարդու գլխում նոր նոր մտքեր եյին ծա-


գումաս: Մէկը մտածեց թե ինչպես և հարժար գաղանին կամ թռչունին վորսալը, մի ուրիշը, թե՝ ինչպես սուր քարերով մահակը մաքրել ճյուղերից:

Հետզիետե զենքերը լավանում եյին: Մահակով կարելի յեր գաղանին միայն շշմեցնել: իսկ յեթե նրա ծայրին սուր քար կամ վոսկը ամրացն եյին, դրանով ծակել և կտրել կարելի կլիներ: Նայելով մահակի յերկարության կամ քարի մեծության, նա նմանում եր կացնի, նիզակի կամ դանակի: Միենուին իրերը միաժամանակ ծառայել են մարդկանց և իբրև գործիք, և' իբրև զենք

Մարդիկ սովորեցին ձգել նիզակը և սպանել գաղանին փախչելիս: Բայց ձեռքով շատ հեռու չես կարող ձգել նիզակը, և գաղանը շատ անգամ փախչում եր վորսորդից: Ինչպես պետք եր անել, վոր նիզակը հեռու թռչեր: Յեվ ահա մարդիկ հարեցին աղեղը: Լարի համար նրանք մազանման խոտեր և կենդանիների ջղեր եյին գործ ածում:

Նոր զենքը մարդու ձեռքն ավելի յերկար գարձեց: Նեար նույն նիզակն ե միայն ավելի կալ ճ: Աղեղից արձակվելով հեռվից՝ սպանում եր գաղանին կամ թռչունին: Կերակուր ճարելը հեշտանում եր: Թույլ ծերունիները, կանալը և յերեխաներն արմատներ և պտուղներ եյին վորսնում, ուժեղ տղամարդիկ վորսորդությամբ ելին

պարապում: Գետ յեղած տեղերում մարդիկ ձըկ-



Նորսություն սովորեցին. նրանք ճյուղերից հյու-

սում ելին թարփեր, վոսկը շինում կարթեր
և դրանցով ձուկ բռնում:

Այդ հին ժամանակներում մարդիկ միայն մի
հոգս ունեին՝ վորքան կարեյի յե շատ ուտելիք
ճարել: Յեկ ուտեստ վորոնելով՝ մարդիկ մեծ
ճարպկություն ձեռք բերին, նկատեցին գաղան-
ների և թոշունների բարքն ու սովորություննե-
րը: Այս ոգնում եր նրանց վորսորդության մի-
ջոցին:

Դլիսի ընկալ. - Գետի թեք, քարքարոտ ափով
բարձրանում եր վայրենի մարդը: Նա բոլորովին
մերկ եր, և նրա ամբողջ կաշին սեացել եր արե-
վից: Յերկար մազերը կախված ելին ուսերին
անկանոն փնջերով, և յերկար մորուքը համար-
յա ծածկում եր կրծքի կեսը: Այդ մարդու ձեռ-
քին մի բավական մեծ ձուկ կար. նա այն վեր-
ցը եր գետի ափից՝ սատկած: Ժամանակ առ
